ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/04/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի
(Հայտերի բացման նիստի ամփոփման մասին)

15.02.2018թ.
Ժամը՝ 11:00-ին

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ռ. Գալստյան*

Անդամներ *Ս. Գրիգորյան*

Լ. Մովսեսյան

Գ. Քոչարյան

Լ. Թազայան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ. Պողոսյան*

1.Տեղեկություն՝ ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի կարիքների բավարարման համար **համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցույթի գնային առաջարկներ պարունակող հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում**, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2018 թվականի փետրվարի 13-ին, ժամը 11:00-ին:

1.2. http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1	ՍԵԳ ՍՊԸ	Երևան, Սարկավագի 72/2, բն.18 էլ. հասցեն՝ seg_tender@mail.ru
2	Բևեռային ուղի ՍՊԸ	Երևան,Մանանդյան 25շ., բն.6էլ. հասցեն՝ beverayin.ughi@yahoo.com

3	Այ Սերվիս ՍՊԸ	Երևան, Հ.Հակոբյան 3 Էլ. հասցեն՝ tenderiservice@gmail.com
4	Մանվել Ջալավյան Ա/Ձ	Երևան ,Մոսկովյան 25, 3/1 տարածք Էլ. հասցեն՝ geek.service@yahoo.com
5	Սերվիս պլյուս ՍՊԸ	Երևան, Նալբանդյան 50 Էլ. հասցեն՝ service.nalbandyan50@gmail.com
6	Ա/Ձ Անուշ Պետրոսյան	Երևան, Արշակունյաց 5, Էլ. հասցեն՝ ga-c@mail.ru

2. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի, «Այ սերվիս» ՍՊԸ-ի, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի, «Սերվիս պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած հայտում տեղ է գտել անհամապատասխանություն:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 «ՍԵԳ» ՍՊԸ-ն, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, «Այ սերվիս» ՍՊԸ-ն, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն, «Սերվիս պլյուս» ՍՊԸ-ն, «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն ներկայացրել են գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1. «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի, «Այ սերվիս» ՍՊԸ-ի, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի, «Սերվիս պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ «ԱՆուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած հայտում տեղ է գտել անհամապատասխանություն հրավերի պահանջներին:

5. Տվյալներ նախահաշվային գնի մասին և յուրաքանչյուր մասնակցի

5.1 Մասնակցի առաջարկված գինը՝

Հ/Թ	Աշխատանքի անվանումը	ՀՀ պետ. Բյուջեով նախատեսված գինը	Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը	Մասնակցի անունը
1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1135000	884200	-	884200	ՍԵԳ ՍՊԸ
2	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1135000	822000	164400	986400	Բևեռային ուղի ՍՊԸ
3	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1135000	1116000	-	1116000	Այ Սերվիս ՍՊԸ
4	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1135000	836400	-	836400	Մանվել Ջալավյան Ա/Ձ
5	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1135000	881460	-	881460	Սերվիս պլյուս ՍՊԸ
6	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1135000	799500	-	799500	Ա/Ձ Անուշ Պետրոսյան

6.Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

6.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկը և այն փաստը, որ ամենացածր գին առաջարկած մասնակիցի՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած հայտը պարունակում է անհամապատասխանություն հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց՝ **«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/04/01»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն:

6.2 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդ աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտե հարցում է

ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ,որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվեն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկը և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

6.3 Մասնակիցներին ծանուցել մրցույթի արդյունքները:

7. Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

7.1 Ցածր գին առաջարկած երեք մասնակիցների հարցում է ուղարկվել՝ յուրաքանչյուր կետի համար ներկայացնելու ծառայության արժեքի բացվածքը՝ առանձին գնացուցակով, ստացվել են հարցման պատասխանները:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի,օրվա և ժամի վերաբերյալ

8.1 Հաջորդ՝ **հայտերի գնահատման արդյունքների հաստատման և հրապարակման նիստը** ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետին համապատասխան տեղի կունենա ք.Երևան, Աբովյան 9 հասցեում՝ 2018 թվականի փետրվարի 23--ին, ժամը 11:00-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ *Ռ. Գալստյան*

Անդամներ՝ _____ *Ս. Գրիգորյան*

_____ *Լ. Մովսեսյան*

_____ Գ. Քոչարյան

_____ Լ.Թազայան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Պողոսյան